ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. <u>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.</u>

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է 2014 թվականի մայիսի 19-ին: Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) պետական համակարգի նոր մարմին է, որի ստեղծումը նորություն էր Հայաստանի Հանրապետության պետաիրավական համակարգում: Կոմիտեի ձևավորման և գործունեության ժամանակահատվածում պարզվեց, որ Օրենքում առկա են մի շարք բացթողումներ, հակասություններ, որոնք էապես ազդում են Կոմիտեի գործունեության արդյունավետության, տվյալ մարմնում ծագող վարչաիրավական և աշխատանքային հարաբերությունների կարգավորմանը:

Նշված Օրենքի Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է տվյալ պահին առկա ստորև նշված խնդիրների լուծմամբ:

Մասնավորապես՝

1. Նկատի ունենալով 2018 թվականին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» թիվ ՀՕ-205-Ն, «Հանրային ծառայության մասին» թիվ ՀՕ-206-Ն, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» թիվ ՀՕ-207-Ն օրենքները, անհրաժեշտություն է առաջանում Օրենքը համապատասխանեցնելու վերոնշյալ օրենքներին, քանի որ, օրինակ՝

-«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի գործողությունը տարածվում է քննչական մարմիններում, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա:

-«Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված նոր պաշտոնների դասակարգումները, այն է՝ քաղաքական պաշտոններ, վարչական պաշտոններ, ինքնավար պաշտոններ, հայեցողական պաշտոններ, իսկ համաձայն նշված օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի՝ քննչական մարմինների ղեկավարների և ղեկավարների տեղակալների, քննիչների, պաշտոնները հանդիսանում են ինքնավար պաշտոններ:

2. Օրենքի հիմնական հասկացությունների հստակեցում.

Օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում են օրենքում օգտագործվող հասկացությունները, որի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված են այն պաշտոնատար անձանց պաշտոնները, ովքեր համարվում են Կոմիտեի ծառայողներ:

Հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը, ուստի անհրաժեշտություն է առաջանում նշված նորմում լրացնել դրույթ, ըստ որի թվարկված պաշտոնները զբաղեցնող անձինք համարվում են ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձինք:

3. Կոմիտեի լիազորությունների հստակեցում.

Կոմիտեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ կազմակերպում և իրականացնում է նախաքննություն: Նախաքննության ընթացքում բոլոր այն անձինք, ովքեր առնչվում են Կոմիտեի հետ՝ անկախ իրենց կարգավիճակից (տուժող, վկա, կասկածյալ, մեղադրյալ և այլն), իրենց անձնական տվյալներն են հայտնում վարույթ իրականացնող մարմնին: Այդ տվյալները պահպանվում են թե՛ թղթային տարբերակով, թե՛ էլեկտրոնային կամ սքանավորված եղանակով: Հաշվի առնելով, որ Կոմիտեում ակամա ձևավորվում է դատավարական տարբեր կարգավիճակներ ունեցող անձանց վերաբերյալ ծավալուն

տեղեկատվություն, օրենսդրական պահանջ է առաջանում սահմանել այդ տվյալների օգտագործման ռեժիմը:

Մասնավորապես՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անձնական տվյալներ մշակելը օրինական է, եթե տվյալները մշակվել են օրենքի պահանջների պահպանմամբ, և տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը, բացառությամբ սույն օրենքով կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ անձնական տվյալներ մշակողը պարտավոր է հետևել և ապահովել, որ տվյալները մշակվեն օրենքի պահանջների պահպանմամբ: Անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալներ մշակողը պարտավոր է անձնական տվյալները մշակել այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է օրինական նպատակներին հասնելու համար:

Հաշվի առնելով, որ Կոմիտեն նախաքննություն իրականացնող մարմին է, իսկ նախաքննության դեպքում անձն իր տվյալները հայտնում է նախաքննություն իրականացնելու նպատակով, հետևաբար այդ տվյալները ձևավորում են անհատական տվյալների ծավալուն շտեմարան:

Հաշվի առնելով ձևավորվող տեղեկատվական շտեմարանի ծավալը և տեղեկատվության անձնական լինելը, իսկ երբեմն նաև հատուկ կատեգորիայի անձնական տվյալների առկայությունը, անհրաժեշտություն է առաջանում օրենսդրորեն ամրագրել այն հանգամանքը, որ Կոմիտեում ձևավորված տեղեկատվական շտեմարանները կարող են օգտագործվել բացառապես իր լիազորություններն իրականացնելու, այսինքն՝ նախաքննության կազմակերպման և իրականացման նպատակով:

Նման որոշակիությունը մի կողմից պաշտպանում է անձի անհատական տվյալները, ներառյալ՝ հատուկ կատեգորիայի անձնական տվյալները, այլ նպատակով օգտագործման, իսկ մյուս կողմից՝ հստակեցնում է Կոմիտեի լիազորությունները երրորդ անձանց հետ իրավահարաբերություններում, եթե նրանք ներկայացնեն որևէ անձի անհատական տվյալների վերաբերյալ հարցումներ:

Լրացումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ օրենսդրությամբ անհատական տվյալների պաշտպանության և դրանց օգտագործելու բացառություններ արդեն իսկ նախատեսված են: Մասնավորապես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասն ուղղակիորեն ամրագրում է, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները պարտավոր են գաղտնի պահել իրենց մոտ գաղտնի հիմունքներով համագործակցող և համագործակցած անձանց անհատական տվյալները:

Բացի այդ, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում, որը 31.08.2018թ.-ին ներկայացվել էր մշտապես գործող պետահիրավական նախարարական կոմիտեի նիստի քննարկմանը, իսկ 06.09.2018թ.-ին՝ ընդգրկվել է Կառավարության նիստ և արժանացել հավանության՝ համապատասխան շտեմարանների կարգավորման մասին տեղեկություններն արդեն իսկ ներառված են, որտեղ նաև նշվում է այն պետական մարմինների շրջանակը, որոնց համար այդ շտեմարանները հասանելի են:

Համանման կարգավորումներ նախատեսված են տարբեր երկրների օրենսդրությամբ, օրինակ՝ Գերմանիայի քրեական դատավարության օրենսգրքի 484-րդ հոդվածում ուղղակի ամրագրված է տեղեկատվության հավաքագրումը, իսկ «Անձնական տվյալների մասին» ՌԴ դաշնային օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետում,

«Անձնական տվյալների մասին» Բելառուսի Հանրապետության օրենքի նախագծի[1] 9-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում և այլ պետությունների իրավական ակտերում սահմանված է, որ այդ առանձնահատկությունները նախատեսվում են ներճյուղային օրենքներով, որոնք էլ ամրագրում են ներկայացված իրավակարգավորմանը համապատասխանող նորմեր:

4. Կոմիտեի գործունեության հրապարակայնությունը.

Գործող կարգավորման 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Քննչական կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը, Կառավարություն է ներկայացնում գրավոր հաղորդում՝ քննչական կոմիտեի նախորդ տարվա գործունեության մասին:

Սակայն, նշված հաղորդման կազմման նախապատրաստական աշխատանքներն իրենցից ներկայացնում են բարդ, բազմածավալ և ժամանակատար առանձին աշխատանքներ:

Նախ, Կոմիտեի ստորաբաժանումներից ստացվում են համապատասխան հաշվետվություններ, որոնցում պետք է պարունակվեն նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ամփոփված տվյալները, ինչը, սակայն, սեղմ ժամկետներում կազմելու համար գործնականում առաջ է բերում խնդիրներ, մասնավորապես՝ տոնական, ոչ աշխատանքային օրերի ավարտից հետո կարճ ժամանակահատված է տրամադրվում Կոմիտեի ստորաբաժանումներին՝ իրենց լոկալ ամփոփումը կատարելու համար, որն էլ ամփոփման համար լրացուցիչ բարդություններ է առաջացնում (ժամկետային սահմանափակման պատճառով հաշվետվությունները կազմելիս թույլ տրված տեխնիկական սխալները, անճշտությունները):

Ստացված տվյալներով ամբողջական բազա ձևավորելու համար կատարվում է համապատասխան հաշվետվություններում և տեղեկանքներում առկա տվյալների ստուգում, շտկում, ուսումնասիրում, ամփոփում, որից հետո ստացված տվյալները ենթարկվում են համեմատական վերլուծության՝ նախորդ հաշվետու ժամանակահատվածի հետ, ինչպես նաև այլ վերլուծությունների՝ ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոնի կողմից ամփոփված միևնույն տվյալների հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև պրակտիկայում տեղ գտած խնդիրները նվազագույնին հասցնելու նպատակով, կարիք է առաջանում է Օրենքում ամրագրված ժամկետը երկարաձգել՝ սահմանելով յուրաքանչյուր ամսվա ապրիլի 1-ը, ինչի արդյունքում ամփոփման աշխատանքները չեն սահմանափակվի սեղմ ժամկետներով, զգալիորեն կթեթևանան տեղեկանքների և հաշվետվությունների ամփոփման աշխատանքները և ի վերջո Կառավաության աշխատակազմ կներկայացվի ամբողջական, ստուգված տվյալներ:

5. Կոմիտեի համակարգի հստակեցում:

Գործող կարգավորման 11-րդ հոդվածը սահմանում է Կոմիտեի համակարգը, որի 1-ին մասի համաձայն Կոմիտեի համակարգը ներառում է Կոմիտեի դեպարտամենտը:

Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի գործողությունը տարածվում է քննչական մարմիններում, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա, և համաձայն նշված օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 2019 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-26-Ն օրենքը, ուստի անհրաժեշտություն է առաջանում կատարելու փոփոխություն, ըստ որի Կոմիտեի դեպարտամենտը կհանվի Կոմիտեի համակարգից:

Միաժամանակ, նշված հոդվածի 2-րդ մասում կատարվում է լրացում, ըստ որի «կայազորային քննչական բաժինները» բառերից հետո լրացվում են «աջակցող մասնագիտական բաժինները:» բառերը, «Երևան քաղաքի քննչական վարչության բաժինները և վարչական շրջանների քննչական բաժինները», բառերը

[1] Տե՛ս http://forumpravo.by/files/proekt_zakona_o_personalnih_dannih.pdf

փոխարինվում են «Երևան քաղաքի քննչական վարչության բաժինները, աջակցող մասնագիտական բաժինները և վարչական շրջանների քննչական բաժինները, աջակցող մասնագիտական բաժինները» բառերով, իսկ «մարզային քննչական վարչության տարածքային բաժինները» բառերից հետո լրացվում են «աջակցող մասնագիտական բաժինները» բառերը:

Նշված լրացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված ստորաբաժանումներում նույնպես առկա են լինելու աջակցող մասնագիտական բաժիններ (ներկայիս Կոմիտեի դեպարտամենտի տարածքային բաժիններ, որոնք ապահովում են Կոմիտեին Հայաստանի Հանրապետության օրենքներով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը և որտեղ իրենց աշխատանքային գործունեությունն են իրականացնում բաժնի պետերը, առաջատար մասնագետները, ինչպես նաև 1-ին կարգի մասնագետները (քաղաքացիական ծառայողներ)):

6. Կոմիտեի նախագահի լիազորությունների հստակեցում.

5.1 Գործող կարգավորման 12-րդ հոդվածը սահմանում է Կոմիտեի նախագահի լիազորությունները, սակայն հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենք 9-րդ հոդվածի պահանջները, անհրաժեշտություն է առաջանում համապատասխան փոփոխություն կատարելու, ըստ որի կսահմանվի, որ Կոմիտեի կառուցվածքը, հաստիքացուցակը և կանոնադրությունը հաստատվելու է մարմնի ղեկավարի կողմից:

5.2 Անհրաժեշտ է արձանագրել, որ 2015թ.-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ պետական մարմինների համակարգում կատարվեցին մի շարք փոփոխություններ, որոնց համաձայն՝ սահմանադրական կարգավիճակ ունեցող պետական մարմինների համակարգում, ի թիվս այլնի, ներառվեցին նաև քննչական մարմինները: ՀՀ Սահմանադրությամբ սահմանվեց «Դատախազությունը և քննչական մարմինները» վերտառությամբ առանձին գլուխ:

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ:

Դատախազի կողմից մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության լիազորությունները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածում:

Օրենսդիրը հստակորեն սահմանում է դատախազության լիազորությունների շրջանակը՝ բացառելու մինչդատական վարույթում դատախազների կողմից կամայական վերաբերմունքի ցանկացած դրսևորում:

Սակայն պետք է արձանագրել, որ վերջին հինգ տարիների վիճակագրական տվյալները վկայում են այն մասին, որ նկատվում է դատախազների կողմից քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունների թվի աճ, որի պարագայում ծառայողական քննություն իրականացնող մարմիններն աշխատել և աշխատելու են աննախադեպ ծանրաբեռնվածությամբ, որը չի կարող չանդրադառնալ և՝ քննության որակի, և՝ աշխատանքի կազմակերպման, և՝ արդյունավետության վրա: Այստեղ հարկ է նշել, որ Դատախազության մի շարք ստորաբաժանումներից ներկայացվում են միջնորդություններ, որոնցում նշված հանգամանքները ո՞չ միայն փաստարկված չեն լինում, այլ նաև պարզաբանման կարիք են ունենում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ քրեական գործի համար հավասարապես պատասխանատու է ինչպես քննիչը, այնպես էլ դատախազը և գործի արդյունքը պետք է լինի քննիչի և դատախազի համատեղ աշխատանքի արգասիք: Ըստ այդմ, եթե քննիչը կատարած գործողությունների համար պետք է ենթարկվի կարգապահական պատասխանատվության, ապա բնականաբար պետք է նախատեսել պատասխանատվության մեխանիզմներ նաև այդ գործի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի նկատմամբ: Այսինքն՝ եթե քննիչն իր լիազորություններն իրականացնելիս թույլ է տալիս որևէ խախտում, ապա հսկողություն իրականացնող դատախազը նույնպես թույլ է տալիս խախտում՝ չշտկելով և համարժեք չարձագանքելով դրանց:

Վերոգրյալը նկատի ունենալով, անհրաժեշտություն է առաջանում Օրենքում լրացում կատարելու, որով կսահմանվի նորմ ըստ որի՝ Կոմիտեի նախագահը կդիմի գլխավոր դատախազին՝ դատախազի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությամբ, ինչպես օրինակ համանման նորմ սահմանված է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն որի՝ գլխավոր դատախազը կամ հսկողություն իրականացնող դատախազը կարող են դիմել մինչդատական քրեական վարույթ իրականացնող համապատասխան մարմին՝ հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությամբ:

7. Կոմիտեի նախագահի տեղակալի այլ լիազորությունները սահմանելու անհրաժեշտությունը:

Գործող կարգավորման 13-րդ հոդվածը սահմանում է Կոմիտեի նախագահի տեղակալի լիազորությունները՝ սակայն այն սահմանված է սպառիչ ցանկով: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օրինակ՝ Կոմիտեի նախագահի 2014 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի, նրա տեղակալների միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին» թիվ 779-Ա հրամանի համաձայն, յուրաքանչյուր տեղակալ իր համակարգման ոլորտին համապատասխան՝ հաստատում է վարչությունների կամ բաժինների ծառայողների միջև աշխատանքի բաժանումը՝ վարչության կամ բաժնի պետի կողմից հաստատված ցանկին համապատասխան: Ուստի, հաշվի առնելով Կոմիտեի նախագահի տեղակալի կողմից իրականացվող վերոնշյալ լիազորությունը, անհրաժեշտություն է առաջանում Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել 1.1-րդ կետ՝ սահմանելով, որ Կոմիտեի նախագահի տեղակալը կատարում է աշխատանքի բաժանում իր համակարգման ներքո գտնվող քննչական ստորաբաժանումների ծառայողների միջև:

8. Կոմիտեի ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջների հստակեցում.

Օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է Կոմիտեի ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջները, որի 2-րդ մասի համաձայն՝ Կոմիտեում պաշտոնի կարող են նշանակվել նաև սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներին չհամապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ այդ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 27 տարին լրանալը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած և պահեստազորում հաշվառված անձինք:

Օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակը, որի 4-րդ մասի 4-րդ կետի համաձայն, Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձը ներկայացնում է՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու կամ օրենքով նախատեսված կարգով պարտադիր

զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ (եթե արական սեռի հավակնորդ է):

Նկատի ունենալով, որ «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-գ» կետերը, ինչպես նաև 13-րդ հոդվածը, 15.11.2017 թվականի ՀՕ-195-Ն օրենքի համաձայն ուժը կորցրել են, իսկ 12-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետն ուժը կկորցնի 01.01.2021 թվականին՝ համաձայն, 15.11.2017 թվականի ՀՕ-195-Ն օրենքի 73-րդ հոդվածի 4-րդ մասի, ուստի, անհրաժեշտություն է առաջանում փոփոխություն կատարելու Օրենքի 17-րդ հոդվածում, որով կսահմանվի, որ Կոմիտեում պաշտոնի կարող են նշանակվել նաև օրենքով նախատեսված կարգով ու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված անձինք, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Օրենքը նախատեսում է բացառություն Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձանց համար, ովքեր կարող են ներկայացնել պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու կամ օրենքով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ (եթե արական սեռի հավակնորդ է): Ստացվում է, որ անձը պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու կամ օրենքով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ ունենալու դեպքում իրավունք ունի ընդգրկվելու Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում, սակայն Կոմիտեում ծառայության նշանակվելու դեպքում անձի վրա տարածվում են «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-գ» կետերը, ինչպես նաև 13-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները, այն պարագայում, երբ «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի քննարկվող հոդվածներն ուժը կորցրել են:

9. Կոմիտեի ծառայողների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու ընթացակարգի հստակեցում.

Օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակը, որի 1-ին մասի համաձայն՝ Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակը համալրում է քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովը՝ տարին մեկ անգամ, որպես կանոն, յուրաքանչյուր տարվա հունվար ամսին:

Նկատի ունենալով, այն հանգամանքը, որ տարվա ընթացքում Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձանց թիվը շատ է և առկա ձևակերպման պարագայում ստացվում է սահմանափակում ենք այն անձանց կոմիտեում ծառայելու ցանկությունը և իրավունքը, ովքեր պարբերաբար դիմում են Կոմիտե, ուստի առաջարկվում է կատարել համապատասխան փոփոխություն՝ բացառելով նշված սահմանափակումը, ըստ որի՝ Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակը համալրվում է տարին մեկ անգամ և որպես կանոն յուրաքանչյուր տարվա հունվար ամսին:

Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Կոմիտեի ծառայողների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով որակավորման ստուգումն իրականացվում է գրավոր քննության միջոցով, սակայն Նախագծով առաջարկվում է կատարել լրացում՝ ամրագրելով նաև քննության բանավոր ընթացակարգ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոմիտեի ծառայողների թեկնածուների ցուցակում ընդգրկված թափուր պաշտոնի հավակնող անձն, առավել նպատակահարմար է, որպեսզի բացի գրավոր քննությունից, հանձնի նաև բանավոր քննություն, որի ընթացքում իր բանավոր խոսքի տիրապետման գրագիտության աստիճանով, հանցագործությունների որակման, քրեադատավարական իրավիճակների մեկնաբանմամբ վստահություն կներշնչի հանձնաժողովին:

Բանավոր քննությունը հնարավորություն կընձեռի պարզել անձի արագ կողմնորոշվելու, բարձրացված խնդրին օպերատիվ լուծում տալու ունակությունները,

կազմակերպական հարցերը լուծելու, ոստիկանության, դատախազության, քննչական բաժինների պետերի հետ իր աշխատանքը կազմակերպելու հմտությունները:

Նախագծով առաջարկվում է 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն որի՝ հայտատուները հանձնում են գրավոր քննություն, որից դրական գնահատական ստանալուց հետո նաև բանավոր քննություն:

Գրավոր և բանավոր քննություններից դրական գնահատական ստացած անձինք լրացնում են հարցաթերթիկ:

Գրավոր և բանավոր քննությունների անցկացման կարգը, հարցաթերթիկում ներառվող հարցերի շրջանակը և լրացման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:

Դրական գնահատական ստացած հայտատուներն ընդգրկվում են քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում՝ որակավորման հանձնաժողովի որոշմամբ:

Միաժամանակ, առաջարկվում է օրենքով սահմանել քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու ժամկետ, որը գործող կարգավորմամբ սահմանված չէ: Ըստ լրացման այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը կտա դրական եզրակացություն 3 տարի ժամկետով կընդգրկվեն թեկնածությունների ցուցակում և թեկնածությունների ցուցակում ընդգրկված ժամանակահատվածում անձը երկու անգամ պաշտոն զբաղեցնելու առաջարկ ստանալու և դրանից հրաժարվելու դեպքում կհանվի թեկնածությունների ցուցակից:

Թեկնածությունների ցուցակում ընդգրկված ժամանակահատվածի ավարտին՝ պաշտոն զբաղեցնելու առաջարկ չստանալու դեպքում, անձը կարող է դիմել որակավորման հանձնաժողովին իր գործնական և տեսական ունակությունները ստուգելու համար: Դրական եզրակացություն ստանալու դեպքում անձը ևս 3 տարի ժամկետով շարունակելու է ընդգրկված մնալ քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում:

10. Կոմիտեի ծառայողների առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու ընթացակարգերի հստակեցում.

Օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է Կոմիտեի ծառայողների առաջխաղացման ցուցակը, սակայն նշված հոդվածը չի կարգավորում առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու հստակ ժամկետ: Ուստի, իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով, Նախագծով առաջարկվում է նշված հոդվածում լրացնել նոր 2-րդ մաս, սահմանելով, որ Կոմիտեի ծառայողների առաջխաղացման ցուցակում ընդգրկվում են 5 տարի ժամանակով:

11. Կոմիտեի ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսման միջոցների հստակեցումը.

Գործող կարգավորման 28-րդ հոդվածը սահմանում է Կոմիտեի ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսման միջոցները, որտեղ առաջարկվում է կատարել լրացում, սահմանելով, որ Կոմիտեի ծառայողները ՀՀ վարչապետի կողմից կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և կոչումների, ինչպես դա ամրագրված է օրինակ՝ «Մաքսային ծառայության մասին», «Փրկարար ծառայության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքներում:

12. Կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց պարգևատրման տեսակների հստակեցում.

Կոմիտեի գործունեության ընթացքում քաղաքացիները, պետական այլ մարմինների ծառայողներն աջակցում են քննիչին վերջինիս լիազորությունների արդյունավետ իրականացմանը, որի պայմաններում անհրաժեշտություն է առաջանում, որպեսզի Կոմիտեի նախագահը՝ Կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց պարգևատրի՝ շնորհակալագրով, հուշանվերով, դրամական պարգևատրմամբ:

Առաջարկվում է հիշյալ հոդվածի 1-ին մասում «շնորհակալագրով, հուշանվերով, դրամական պարգևատրմամբ» բառերից հետո լրացնել «մեդալով կամ կրծքանշանով» բառերը:

Փոփոխությունը պայմանավորված է Օրենքում կիրառվող եզրույթների միասնականությունն ապահովելու պայմանով, քանի որ ինքնին կիրառվող խրախուսանքի միջոցները նույնն են: Բացի այդ Կոմիտեի գործունեությանն օժանդակող անձինք կարող են խրախուսվել նաև մեդալով կամ կրծքանշանով, առավել ևս եթե այդ անձինք այլ գերատեսչությունների կամ կառույցների ղեկավարներ են:

11.Կոմիտեի ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի տեսակների հստակեցումը.

Օրենքի 30-րդ հոդվածը սահմանում է կարգապահական, մասնավորապես՝ զգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնից ազատում, տույժերի տեսակները:

Համաձայն առկա կարգավորումների՝ նշված հոդվածով նախատեսված կարգապահական տույժերը քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող մարմինը կամ պաշտոնատար անձը:

Կարգապահական խախտման փաստի առթիվ Կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվում է կարգապահական հանձնաժողովի որոշմամբ: Կարգապահական խախտման փաստի առկայության վերաբերյալ որոշումը կարգապահական հանձնաժողովը ներկայացնում է Կոմիտեի նախագահին: Վերջինս Կոմիտեի ծառայողների նկատմամբ նշանակում է կարգապահական տույժ:

Նախագծով առաջարկվում է, որպեսզի նշված հոդվածով սահմանված՝ խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնից ազատում, տույժերը Կոմիտեի ծառայողների նկատմամբ կիրառվեն միայն կարգապահական վարույթ անցկացնելուց հետո (ծառայողական քննություն):

Իսկ զգուշացում և նկատողություն կարգապահական տույժերը նշանակվի առանց կարգապահական վարույթ անցկացնելու, որի դեպքում սակայն, Կոմիտեի ծառայողը գրավոր բացատրություն կներկայացնի կարգապահական տույժ նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին: Եթե բացատրությունում կարգապահական խախտում թույլ տված քննչական կոմիտեի քննիչը չի ընդունի կատարված խախտման մեջ իր մեղավորությունը, ապա կանցկացվի ծառայողական քննություն:

12. Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգի հստակեցում.

Օրենքի 31-րդ հոդվածը սահմանում է Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը, որն ունի հստակեցման կարիք, մասնավորապես անհրաժեշտ է Օրենքում հստակ ամրագրել, որ կարգապահական խախտման փաստի առթիվ Կոմիտեի ծառայողի նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն, որի փուլերն են՝ նախնական ուսումնասիրությունը և կարգապահական վարույթը: Միաժամանակ, անհրաժեշտ է հստակեցնել, որ ծառայողական քննություն անցկացնելու նպատակով նախնական ուսումնասիրություն կատարելու կարգը սահմանվում է Կոմիտեի նախագահի հրամանով:

13. Կոմիտեի ծառայողների լիազորությունների կասեցման ընթացակարգի հստակեցում.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունները կասեցվում են՝

1) քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելու դեպքում մինչև համապատասխան վերջնական որոշման ընդունումը.

2) քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվելու դեպքում, եթե նրան վերագրվում է այնպիսի խախտում, որը, սույն օրենքի համաձայն, կարող է պաշտոնից ազատման հիմք հանդիսանալ՝ մինչև տվյալ հիմքով հարուցված կարգապահական վարույթով վերջնական որոշման ընդունումը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա աշխատավարձը պահպանվում է:

Գործնականում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ քննիչի լիազորությունները կասեցվում են երկար ժամանակահատվածով, որի ընթացքում վերջինիս աշխատանքը բաշխվում է ստորաբաժանման մյուս քննիչների միջև՝ մեծացնելով նրանց ծանրաբեռնվածությունը: Մյուս կողմից էլ ստացվում է, որ անձը զբաղեցնելով հաստիքը չի աշխատում (որի համար վարձատրվում է) և նրա հաստիքին այլ անձ չի կարող նշանակվել: Նման իրավիճակը խաթարում է քննչական ստորաբաժանման բնականոն աշխատանքը, ինչն էլ բացասաբար է անդրադառնում նախաքննության որակի և ժամկետների վրա: Ուստի անհրաժեշտ է նախատեսել այնպիսի կառուցակարգ, որի պարագայում քննիչի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա պաշտոնը ժամանակավորապես կզբաղեցնի այլ քննիչ, մինչև համապատասխան հիմքի վերացումը: Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի վերաբերյալ արդարացման որոշման օրինական ուժի մեջ մտնելու դեպքում անձը կնշանակվի իր նախկին կամ հավասարազոր պաշտոնում: Եթե նա գրավոր կհրաժարվի հավասարազոր պաշտոնում նշանակվելուց, ապա Օրենքի 22.1-րդ հոդվածով սահմանված կարգով կգրանցվի կադրերի ռեզերվում: Իսկ պաշտոնը ժամանակավորապես զբաղեցրած քննիչը, եթե հավասարազոր պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, կամ նա գրավոր կհրաժարվի այլ հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոնի նշանակվելուց՝ կընդգրկվի կադրերի ռեզերվում:

14. Կոմիտեի ծառայողներին գործուղելու հիմքերի հստակեցում.

Օրենքի 34-րդ հոդվածը սահմանում է Կոմիտեի ծառայողների գործուղման հետ կապված դրույթները, որտեղ առկա են ձևակերպումներ, որոնք հստակեցման կարիք ունեն: Ուստի, առաջարկվում է Օրենքի հիշյալ հոդվածի 1-ին մասում «գործուղվել» բառից հետո լրացնել «այլ քննչական մարմին» բառերը, իսկ «պատճառով» բառից հետո «կամ քննչական խմբում ընդգրկվելու նպատակով» բառերը: Իսկ 4-րդ մասում՝ «գործուղվել» բառից հետո լրացնել «, բացառությամբ քննչական խմբում ընդգրկվելու նպատակով այլ քննչական մարմին կամ մարզային ստորաբաժանման ներսում գործուղվելու դեպքերի» բառերը:

Հիշյալ լրացումները պայմանավորված են նրանով, որ Կոմիտեի ծառայողները գործուղվում են Ազգային անվտանգության ծառայությունում կամ Հատուկ քննչական ծառայությունում քննվող բազմադրվագ և բարդ գործերով կազմվող քննչական խմբերի կազմում քննություն իրականացնելու նպատակով, ինչը երբեմն տևում է 1 տարուց ավել կամ կարող է անհրաժեշտություն առաջանա կասեցված գործով կամ մաս անջատված գործով իրականացնել նույնական քննություն, որի դեպքում տրամաբանական է և նպատակահարմար գործուղել նույն քննիչին, ով ոչ միայն ծանոթ է այդ գործին և առավել արդյունավետ կիրականացնի նախաքննությունը, այլ

նաև կկարողանա պատճառահետևանքային որոշ վերլուծություններ իրականացնել հետագա ընթացքի առնչությամբ: Միևնույն մարզային ստորաբաժանման ներսում գործուղումների անհրաժեշտությունը պայմանավորված է նույն վարչության տարբեր բաժինների քննիչների ծանրաբեռնվածության անհավասարությամբ և քննության արդյունավետությունից ելնելով՝ որոշակի ժամանակահատվածով քննիչների գործուղմամբ այդ բաժնում քրեական գործ քննող քննիչների թվի ժամանակավոր ավելացմամբ:

15. Կոմիտեի ծառայողների ատեստավորման ընթացակարգի հստակեցում.

Օրենքի 35-րդ հոդվածով կարգավորվում է Կոմիտեի ծառայողների ատեստավորման կարգը, որտեղ առաջարկվում է կատարել փոփոխություն՝ սահմանելով, որ որակավորման հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր մեկ տարի վեց ամիս հաճախականությամբ կստուգվեն Կոմիտեի ծառայողների գործնական և տեսական ունակությունները, որի անցկացման կարգը կսահմանվի Կոմիտեի նախագահի հրամանով:

2.Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծի ընդունմամբ իրականացվում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի օրենսդրական հիմքերի հստակեցում: Մասնավորապես. կարևոր է ունենալ քննչական կոմիտեի վերաբերյալ կենսունակ իրավական ակտ, որը կարտահայտի Կոմիտեի առանձնահատկությունները և կնպաստի Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին վերաբերող օրենսդրության կատարելագործմանը:

3.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք.

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ համատեղ:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունմամբ իրավական կարգավորում կստանան մի շարք հարաբերություններ, որոնք կարևոր նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի բնականոն գործունեության համար:

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ